

**Հանրակրթական դպրոցում գրականության
ուսումնառության
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Հանրակրթական դպրոցում գրականության ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Գրականության ուսումնասիրությունը առաջարկվում է կառուցել հետևյալ **սկզբունքներով**.

Ժողովրդավարական. սովորողը մասնակցում է ուսումնառության պլանավորմանը և դրա իրականացման գործընթացին, նրա կարծիքի և հետաքրքրությունների հիման վրա են ծրագրվում նյութի բովանդակությունը, մշակվում ընթացիկ աշխատանքները:

Անձնակենտրոն կամ սովորողակենտրոն ուսումնառություն. սովորողն ինքնուրույն է, աշխատում է հիմնականում դասարանում՝ ուսուցչի և ընկերների հետ համագործակցելով: Ուսումնառության գործընթացում շեշտադրվում են սովորողի անհատականությունը, անձնային ներդաշնակ զարգացումը, սովորելու ոճը, հետաքրքրությունների և կարիքների շրջանակը: Սովորողը նախագծում և իրականացնում է տարաբնույթ հետազոտություններ:

Տարբերակված ուսուցում. ուսումնառության բովանդակությունը, կրթական միջավայրը, տրվող առաջադրանքները, չափորոշային պահանջները ձևավորվում են՝ հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պահանջները, կարողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալու տեքստի **ենթիմաստը**, հեղինակի ասելը, հերոսների արարքների դրդապատճառները, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները: Գրական հերոսների արարքների, բնավորության վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալու, ճանաչելու ինքն իրեն և այլ մարդկանց, այս ամենի շնորհիվ սովորողը կկարողանա կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ: Տարբեր ոճերի տեքստերի մանրագնի ուսումնասիրումը կհանգեցնի գլխավոր նպատակադրման իրականացմանը, այն է՝ **բանավոր և գրավոր խոսքի առկայություն, մշտական զարգացում և կատարելագործում**:

2. Գրականության ուսումնառությունը **սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի** ձևավորման և զարգացմանն է ուղղված: Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, դրանց համակողմանի վերլուծությունը քննադատական և պատկերավոր մտածողության զարգացման նպատակ ունեն: Գրական-գեղարվեստական տեքստերի լեզվատճական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, արժևորել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշի դրույթների, պահանջների, սահմանված կարողունակությունների հիման վրա մշակված վերջնարդյունքներով սահմանվել են **հիմնական և ենթահասկացություններ**, որոնց համապատասխան, ինչպես նաև տարիքային ամեն խմբի համար սահմանված են 4-5 կետով չափորոշային հստակ պահանջներ կամ չափանիշներ: Ամեն հասկացությանը համապատասխան սահմանված չափանիշները սովորողի կարողունակությունների ձեռքբերման գնահատման հիմքն է: Այսինքն՝ ուսուցիչը միավորային գնահատման սանդղակները կազմելու է՝ առաջնորդվելով ամեն դասարանի համար սահմանված վերջնարդյունքներով:

Հարկ է նկատել, որ արդի դարաշրջանում **երկչափ** կրթությունից՝ **գիտելիք - կարողություն կամ հմտություն**, անցում է կատարվել **եռաչափ** կրթության՝ **հասկացություն - գիտելիք - կարողություն/հմտություն**: Այդ է պատճառը, որ գրականության վերջնարդյունքները սահմանվել են որոշակի հասկացությունների և ենթահասկացությունների տիրույթներում:

7-12-րդ դասարանների **գրականության** ուսումնասիրության համար սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

Ընթերցանություն՝ բովանդակություն և ձև

Ստեղծարարություն՝ տեքստի հետազոտում և տեքստի ստեղծում

Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում:

Վերջնարդյունքները ներկայացված են աղյուսակով, տարիքային բոլոր խմբերի, այսինքն՝ բոլոր դասարանների համար սահմանված են վերջնարդյունքները կամ չափանիշները, որոնք 4-5-ն են, սահմանված են հստակ և չափելի: Այնպես որ՝ ուսուցչի համար տեսանելի և մատչելի կլինի օգտվել դրանցից և կազմել գնահատման սանդղակներ՝ սովորողների վերջնարդյունքներին համապատասխան ձեռքբերումները գնահատելու համար: Հիմնական հասկացություններից **ինքնությունը՝ վերաբերմունք և արժևորում** ենթահասկացություններով, միավորային գնահատում չի ենթադրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Գրականության ծրագրերում ընդգրկված նյութը համապատասխանում է տարիքային տվյալ խմբի առջև դրված նպատակներին և խնդիրներին, այսինքն՝ չափորոշյալ սահմանված վերջնարդյունքներին ամբողջությամբ:

Նկատի ունենալով սովորողների տարիքային առանձնահատկությունները, նրանց հետաքրքրության շրջանակը և պահանջունքները՝ նախատեսվում են նյութերի ընտրության հետևյալ շրջանակը՝

- միջին դպրոցի երկրորդ աստիճան. 13-15 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը կազմում են կենսագրական, հերոսական բնույթի պատմությունները, այդ պատճառով էլ տարիքային այս խմբի համար պիտի ընտրվեն նշանավոր մարդկանց կենսագրականներ, հերոսական պատմություններ:
- ավագ դպրոցի կամ 15-17 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը սեփական ես-ի շուրջ է պտտվում. տեքստերը պիտի համապատասխանեն նրա անձնական հետաքրքրությունները բավարարելուն, մասնագիտական կողմնորոշման հարցերը լուծելուն:

7-12-րդ դասարաններում գրականության **ծրագրերը** ներկայացված են աղյուսակների տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Վերջնարդյունքները
4. Բովանդակությունը
5. Առաջարկվող գործունեության ձևերը
6. Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները
7. Միջառարկայական կապերը
8. Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ

Յուրաքանչյուր դասարանում ուսումնառելու համար առանձնացվել են որոշակի *թեմաներ (1)*, որոնք համապատասխանում են տարիքային տվյալ խմբի հետաքրքրություններին, առանձնահատկություններին և պահանջներին:

Նախ նշվում են *դասարանը*, տվյալ դասարանում հայոց կամ մայրենի լեզվի և գրականության ընդհանրական *ժամաքանակը (1)* ուսումնական տարվա համար, ապա՝ *թեմայի վերնագիրը (1)*, տվյալ թեմային տրամադրվող մոտավոր *ժամաքանակը*: Հաջորդող հորիզոնական պլանակներում նշվում են թեմայի ուսումնառության *նպատակները (2)*, ապա ակնկալվող *վերջնարդյունքները (3)*, այսինքն՝ տվյալ թեմայի ուսումնասիրության ավարտին ինչ պիտի իմանա և կարողանա աշակերտը: Հիմնական շեշտադրումը սովորողի կարողունակությունների, բանավոր և գրավոր խոսք կազմելու հմտության զարգացումն է:

Գրականության ուսումնառությունը 7-12-րդ դասարաններում: Սեփական անձի ինքնաճանաչողության, ինչպես նաև աշխարհաճանաչողության համար ծանրակշիռ դեր ունի գրականության ուսումնասիրությունը, որը մարդկանց, սեփական անձը, աշխարհը ճանաչելու, մարդկանց հարաբերությունները վերլուծելու և արժևորելու, հոգատար և կարեկից վերաբերմունք դրսևորելու սեփական անձի, մտերիմների, շրջապատի մարդկանց նկատմամբ, ինչպես նաև գեղեցիկին և կյանքի բանաստեղծությանը հաղորդակից լինելու յուրօրինակ հնարավորություն է:

Կարողունակություններ ձևավորելու նպատակն իրականացնելու համար գրականություն ծրագրերը կազմելիս հաշվի են առնվել սովորողի տարիքային առանձնահատկություններով պայմանավորված հետաքրքրությունները, ինչպես նաև կառուցվածքային և համակարգված մտածողություն ձևավորելու շարունակականության ապահովումը:

Այս նպատակով հայ և արտասահմանյան գրականության ընտրվի նմուշների միջոցով **հանրակրթական դպրոցի միջին՝ 7-9-րդ դասարաններում** սովորողները կձանոթանան *գրական սեռեր, ժանրեր, երկի կառուցվածք, կոնֆլիկտ, կերպար* եզրույթներին, կպատասխանեն հիմնական և առնչակից գաղափարական հարցադրումներին, կբացատրեն կոնֆլիկտի, կերպարի զարգացումները, կտարբերեն հեղինակի և պատմողի կերպարները, կձանոթանան տեքստը տեքստում կառույցին, կհասկանան պատճառահետևանքային, միջառարկայական կապերն ու առնչությունները, կկազմեն բանավոր և գրավոր խոսք՝ կիրառելով հայոց լեզվից սովորածը, ինչպես նաև, օգտագործելով ժամանակակից տեխնիկական միջոցներն ու հնարավորությունները, հանդես կգան դերային մեկնաբանություններով՝ դրսևորելով սեփական մոտեցումները, արտահայտելով վերաբերմունքը քննարկվող երևույթների նկատմամբ: Այս ամենի արդյունքում սովորողը կկարողանա զարգացնել քննական մտածողություն, արտահատել սեփական հիմնվորված դիրքորոշումը, լսել և հաշվի առնել դիմացինի տեսակետը, բացատրել սեփական ընտրությունը՝ արժևորելով նաև մյուսների տեսակետները ու մոտեցումները:

Ավագ դպրոցի գրականության ծրագրում առաջարկվում են ընդհանրական թեմաներ՝ թույլ տալով ուսուցչին և սովորողին համատեղ պլանավորման արդյունքում ընտրել նախընտրելի գործերը կամ հեղինակներին և ելնելով առարկայական նպատակներից՝ հասնել վերջնարդյունքներին, որոնք հիմնված են ոչ միայն ճանաչողության, այլև մտածողության զարգացման, կարողունակությունների ձևավորման վրա:

Ավագ դպրոցում գրականություն առարկայի ուսումնառությունն ապահովում է եռաչափության սկզբունքը: Այս նպատակով գրականագիտական տարրական գիտելիքների իմացությունը, գրողական տեխնիկայի կիրառության բացատրությունը, պատճառահետևանքային կապերի վերլուծությունը սովորողին հնարավորություն կտան ապահովելու մտածողության խորություն և ծավալայնություն, առավել հստակ տեսնելու գրականությունը ընդհանուր ուսումնական-առարկայական համատեքստում, կատարելու համեմատական վերլուծություններ, տեքստն ընկալելու և մեկնաբանելու համատեքստում և նրանից դուրս, բացատրելու միջառարկայական կապերը, և այս ամենն արտահայտելու թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքով՝ հիմնվելով փաստերի և սեփական դիտարկումների վրա:

Ավագ դպրոցում նորությունը գրական երկերի ընտրության հնարավորությունն է ոչ թե ըստ գրականագիտական ժամանակագրության, այլ ըստ գրական սեռերի և ժանրերի, աշակերտի տարիքային առանձնահատկությունների և հետաքրքրությունների:

Ըստ ժանրերի դասակարգման դեպքում հաշվի են առնվել գրական երկերի քննության հնարավորությունը՝ ժանրային առանձնահատկություններից և պահանջներից ելնելով: Ասենք, եթե ուսումնասիրվում է էպիկական սեռի *պատմվածք* ժանրը, ապա ներկայացվում են ժանրին բնորոշ առանձնահատկությունները, ապա ընթերցում և հետազոտական աշխատանք են կատարում հայ և արտասահմանյան գրականությունից ընտրված պատմվածքների հիման վրա: *Ըստ անձնային հետաքրքրությունների* բաժանման դեպքում 11-րդ դասարանի ծրագրում տեղ են գտել սեփական անձի բացահայտմանը նպաստող քննարկական ստեղծագործություններ, հայ և համաշխարհային գրականության ընտիր արձակ նմուշներ: Սա սովորողին հնարավորություն կտա երկխոսելու ինքն իր հետ, վերլուծելու սեփական անձը և զգացմունքները, հասկանալու մարդ-բնություն փիլիսոփայական կապը, տեսնելու սեփական անձը ժամանակի, տարածության համատեքստում, ինչպես

նաև վերլուծելու անհատ-հասարակություն հարաբերությունները գրական ստեղծագործություններում և դրանցից դուրս՝ հանրության կյանքում:

Ավագ դպրոցի ավարտական դասարանում առաջարկվում են հետևյալ բաժինները.

- **«Գրողներ, տեքստեր, ընթերցողներ».** սովորողները գրական և ոչ գրական տեքստերի միջոցով կանդրադառնան, թե տեքստի միջոցով գրողը ինչպես է կապ հաստատում ընթերցողի հետ, ինչ միջոցներ և գրական ամենատարբեր հնարներ է կիրառում ընթերցողի զգացմունքների և բանականության վրա ազդելու նպատակով, որից էլնելով էլ ընթերցողը համաձայնում կամ վիճում է հեղինակի հետ:
- **«Ժամանակ և տարածություն».** սովորողները կանդրադառնան տարբեր ժամանակների ու մշակույթների գրական տեքստերին, որոնց շնորհիվ կբացահայտեն, թե գրականության միջոցով ինչպես է ընթերցողը հաղորդակից դառնում այլ մշակույթներին, ինչ արդի խնդիրներ է արժարժում ոչ մեր ժամանակներում ստեղծված գրականությունը, ինչպես է փոխվում տեքստի ընկալումը՝ կախված մշակույթից և ժամանակից, ինչպես է լեզուն արտացոլում գրական երկի ժամանակն ու տեղը:
- **«Միջտեքստային կապեր».** սովորողները կառնչվեն տարբեր տեքստերի միջև գոյություն ունեցող կապերին՝ սկսած վերնագրից, բնաբանից մինչև հղումների համակարգերն ու գաղափարական հարցադրումները: Նրանք հնարավորություն կստանան բացահայտելու անցյալ և ներկա գրական կապերը, հասկանալու տեքստերի ընդհանրությունները կամ շեղումները ընդունված ձևերից: Այս բաժնի հետազոտական հիմքը համեմատական վերլուծությունն է տարբեր տեքստերի միջև, ինչպես նաև միևնույն խնդրի, թեմայի բազմաթիվ դրսևորումների և տեսակետների քննությունը:

Բացի դրանից՝ ուսումնասիրվող գրական երկերի և հեղինակների ազատ ընտրությունը նպաստում է տարբերակված ուսուցման իրականացմանը. սովորողները հնարավորություն կունենան առաջարկված ստեղծագործությունների և հեղինակների ցանկից ընտրելու իրենց առավել հոգեհարազատ երկեր՝ դրանով ընդլայնելով հետաքրքրության և իմացության շրջանակը:

Առաջարկվող գործունեության ձևեր (5) բաժնում ներկայացված են դասաժամին կամ դրանից դուրս սովորողի կատարելիք գործը: Այս բաժինը կառուցված է պարզից բարդը գնալու սկզբունքով և հիմնականում հենվում է ամերիկացի մանակավարժ և հոգեբան Բենջամին Բլումի աստիճանակարգով սահմանված բայերով գործողության քայլաշարի վրա: Այս սկզբունքով աշխատելու դեպքում ապահովվում է տարբերակված ուսուցումը, ինչպես նաև աշակերտի գործունեության բազմազանությունը նույն թեմայի շրջանակում:

Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ (6) բաժնում առանձնացվել են ութ հասկացություններ, որոնցից 2-3-ը կարող են կիրառվել տվյալ թեմայի ուսումնառության շրջանակում: Դրանք ապահովում են հայոց լեզվից և գրականությունից ուսուցանվող թեմայի կապը այլ առարկաների հետ: Առանձնացվել են հետևյալ հասկացությունները՝

1. Օրինաչափություն
2. Պատճառ և հետևանք
3. Կառուցվածք և գործառույթ
4. Կայունություն և փոփոխություն
5. Անհատներ և հարաբերություններ
6. Ժամանակ և տարածություն
7. Անհատական և մշակութային արժեհամակարգ
8. Փոփոխություն և զարգացում

Ծրագրերում հաջորդ բաժինը **Միջառարկայական կապերն են**, որտեղ ցույց են տրվում, թե ինչպես կարելի է գրականության տվյալ թեման կապել այլ առարկաներից ուսումնասիրվող թեմաների հետ:

Վերջին բաժնում նշվում են այն համարները, որոնք **Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված** տարիքային տվյալ խմբին ներկայացվող վերջնարդյունքներին են համապատասխանում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	ԵՆԹԱՀԱՍԿԱ ՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	7-րդ դասարան	8-րդ դասարան	9-րդ դասարան
ԸՆԹԵՐՑԱՆՈՒ ԹՅՈՒՆ	Բովանդակություն	Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը, մեկնաբանի՝ հիմնվելով գրական օրինակների վրա:	Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը /գաղափարները:	Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը /գաղափարները:
		Կատարի տեղին և նպատակային հարցադրումներ, ճիշտ եզրահանգումներ, կանխագուշակի՝ հիմնվելով առկա ի վրա:	Տարբերակի տեքստում արտահայտված գաղափարների արդիականությունը և ժամանակագրությունը:	Դուրս բերի գլխավոր առանցքային հարցադրումները, ճանաչի արդիականությունը, հիմնավորի՝ կյանքից և գրականությունից գտնելով համապատասխան օրինակներ:
		Դուրս բերի համատեքստային բառեր ու աշխատի դրանցով, համեմատի՝ զուգադրի և հակադրի տեքստերը, տեքստերից սովորած պատկերավորման միջոցները կիրառի խոսքում:	Մեկնաբանի գաղափարը՝ հիմնվելով գրական օրինակների վրա:	Մեկնաբանի գրական երկի, գրական կերպարի զարգացման պատճառահետևանքային կապերը:
		Հասկանա և մեկնաբանի գրական-գեղարվեստական կերպարի դերը գրվածքում:	Մեկնաբանի գրական կերպարը, բացատրի դրա զարգացումը:	Մեկնաբանի՝ ելնելով ժանրային առանձնահատկություններից:
	Ձև	Տարբերի գրական սեռերը և ժանրերը:	Ճանաչի գրական սեռերը, ժանրերը, տարբերակի դրանց առանձնահատկությունները, կերպավորման սկզբունքները:	Ճանաչի և տարբերակի ստեղծագործության ժանրը՝ ելնելով գրական առանցքային առանձնահատկություններից:
		Իմանա, պատկերացում կազմի գրական կոնֆլիկտի (բախման) մասին:	Հասկանա և մեկնաբանի հեղինակի և պատմողի (նարատորի) տարբերությունը:	Ընդհանրական պատմողի (նարատորի) դիտանկյան առանձնահատկությունների մասին:
		Ճանաչի գրական կոնֆլիկտի տիպարագման հաջորդական աստիճանները:	Ընդհանրական պատկերացում կազմի և մեկնաբանի պատումի կառուցման «տեքստը տեքստում» ձևը:	Տարբերակի պատմողի դիտանկյան ձևերը, մեկնաբանի դրանց կապը գրական ժանրի հետ:
		Կյանքից և գրականությունից առանձնացնի կոնֆլիկտի տարբեր ձևեր:	Գտնի «տեքստը տեքստում» ձևը այլ տեքստերում, զուգահեռներ տանի մուլտիմիդի, ֆիլմի հետ:	Զուգահեռներ տանի գրականության և մուլտիմիդի, ֆիլմի պատմողների դիտանկյունների միջև:
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ	Տեքստի հետազոտում	Ուսումնասիրի և մեկնաբանի գրողի օգտագործած բառապաշարը:	Ուսումնասիրի և մեկնաբանի գրողի օգտագործած բառապաշարը:	Ուսումնասիրի և մեկնաբանի գրողի օգտագործած բառապաշարը:
		Գտնի և մեկնաբանի գրողի օգտագործած գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները:	Հասկանա և վեր հանի տեքստում ձևաբանական միջոցների կիրառությունը միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով:	Հասկանա և մեկնաբանի տեքստում շարահյուսական միջոցների կիրառությունը միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով:

		Քացատրի՝ տեքստում պատկերված ժամանակաշրջանի, միջավայրի արտահայտման կերպը:	Ուսումնասիրի և մեկնաբանի ստեղծագործությունը պատ մող (նարատոր) - տեքստ դիրքից:	Համեմատի՝ համադրի և հակադրի տարբեր հեղինակների կողմից կերտված կերպարների առանձնահատկությունները:
		Գտնի և մեկնաբանի ստեղծագործության կոնֆլիկտն ապահովող հակադիր բևեռի կամ բևեռների բախումը:	Ուսումնասիրի և մեկնաբանի Մտեղծագործությունը հեղինակ - տեքստ դիրքից:	Համեմատի՝ համադրի և հակադրի պատմողի դիտանկյան ձևերը տարբեր ստեղծագործություններում:
	Տեքստի ստեղծում	Կարդացած ստեղծագործություններից ընտրի հերոսներ/կերպարներ և հորինի վերջիններիս բնավորությունն արտահայտող խորհրդանիշեր (կենդանի, իր, գույն և այլն):	Կարդացած ստեղծագործություններից ընտրի պատմողներ (նարատորներ) և ստեղծի վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:	Կարդացած ստեղծագործությունների համար հորինի նոր վերնագրեր:
		Մտապատկերումներ անի, կատարի կռահումներ (բանավոր և գրավոր):	Ընտրի որևէ ստեղծագործություն, փոխի ավարտը՝ ստեղծելով կոնֆլիկտի լուծման նոր տարբերակ/տարբերակներ:	Առաջարկի գրքի շապիկի նոր ձևավորում և սյուժե տալիս նկարագրումներ (գույն, պատկեր և այլն)՝ կապելով դրանք տեքստի հետ:
		Լսածը կամ կարդացածը վերարտադրի ստեղծագործաբար:	Լսածը կամ կարդացածը վերարտադրի ստեղծագործաբար:	3.Գրի միևնույն դիպաշարն ունեցող կարճ պատումներ՝ օգտագործելով պատմողի տարբեր դիտանկյուններ:
		Գրի կարճ պատում՝ կիրառելով կոնֆլիկտի և դիպաշարի զարգացումն ապահովող հաջորդական աստիճանները (նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, զագաթնակետ, գործողության անկում, լուծում):	Գրի կարճ պատում՝ կիրառելով պատումի կառուցման «տեքստը տեքստում» ձևը:	Գրի պատումի տարբերակներ՝ երկու դիտանկյունից էս, շրջապատում գտնվող կենդանի կամ իր:
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ	Վերաբերմունք վարքագիծ	Հաղորդակցվի և համագործակցի վստահորեն, դրսևորի հանդուրժողականություն: Լսի դիմացինին առանց ընդհատելու և դրսևորի հարգալից երաբերմունք:	Հաղորդակցվի և համագործակցի՝ ձևավորելով և զարգացնելով թիմային մտածողություն: Լսի դիմացինին առանց ընդհատելու և դրսևորի հարգալից վերաբերմունք:	Հաղորդակցվի և համագործակցի՝ ձևավորելով թիմային մտածողություն, դրսևորի առաջնորդի հատկություններ: Համբերությամբ լսի դիմացինին, հայտնի սեփական տեսակետը՝ հիմնավորելով և մեկնաբանելով այն:
		Կարողանա ճիշտ ձևակերպել հարցը և որոնել լուծման ուղիները:	Կարողանա ճիշտ ձևակերպել հարցը և որոնել լուծման ուղիները:	Կարողանա ճիշտ ձևակերպել հարցը կամ հիմնախնդիրը և որոնել լուծման ուղիները:
		Հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը:	Հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը:	Փաստերով հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը և դիրքորոշումը:

	Արժևորում	Հասկանա և գնահատի հայ և համաշխարհային գրականության իմացությունը որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր պայման:	Հայ և համաշխարհային գրականության միջոցով հասկա և արժևորի սեփական և այլ ազգերի մշակույթը:	Հայ և համաշխարհային գրականության օրինակով ճանաչի և արժևորի բարին, գեղեցիկը, վեհը:
		Հասկանա և արժևորի հայ գրականության դերը այլ ազգերի գրականության յունների շարքում:	Հասկանա և գնահատի գրականության դերը արվեստի այլ բնագավառների համատեքստում:	Հասկանա և գնահատի գրականության միջոցով պատկերավոր խոսք ձևավորելու հնարավորությունն ու դրա կիրառությունը այլ ոլորտներում:
		Ճանաչի և արժևորի ժամանակակից՝ իր կողքին ապրող գրողներին:	Ճանաչի և արժևորի ժամանակակից՝ իր կողքին ապրող գրողներին:	Ճանաչի և արժևորի ժամանակակից՝ իր կողքին ապրող գրողներին:
		Ձեռք բերի հետաքրքրասիրություն գրքի հանդեպ և ընթերցասիրություն ողջ կյանքի ընթացքում:	Ձեռք բերի հետաքրքրասիրություն գրքի հանդեպ և ընթերցասիրություն ողջ կյանքի ընթացքում:	Ձեռք բերի հետաքրքրասիրություն գրքի հանդեպ և ընթերցասիրություն ողջ կյանքի ընթացքում:

Գրականության ուսումնառության վերջնարդյունքները

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
10-12-րդ դասարան

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ	ԵՆԹԱՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10-րդ դասարան	11-րդ դասարան	12-րդ դասարան
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ	Բովանդակություն	Հասկանա և մեկնաբանի տեքստի հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները:	Հասկանա և մեկնաբանի տեքստի հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները, հիմնավորի արդիականությունը:	Հասկանա և մեկնաբանի տեքստի հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները, ճանաչի և մեկնաբանի արդիականությունը:
		Հիմնավորի տեքստի արդիականությունը՝ ներգրավելով տարբեր ժամանակաշրջանների, ոճերի, մշակույթների, ժանրերի տեքստեր՝ մեկնաբանի դրանց նշանակությունը և ասելիքը:	Մեկնաբանի տեքստը համատեքստում և դրանից դուրս:	Մեկնաբանի տեքստը համատեքստում և դրանից դուրս:
		Ներկայացնի և մեկնաբանի տեքստերը մշակութային համատեքստում, տեղական և համամարդկային հիմնահարցերը, վերաբերմունքը դրանց նկատմամբ, դրանց մեկնաբանությունների բազմազանությունը:	Համադրի և հակադրի տարբեր գրողների աշխարհայացքային դրսևորումները ստեղծագործություններում: <i>Խորացված ուսուցման սաների համար.</i>	Համեմատի ՝ գուգադրի և հակադրի գրական ստեղծագործությունները:
		Զարգացնի կապերը լեզվի և գրականության և արվեստի այլ բնագավառների միջև:	Մեկնաբանի տեքստում կիրառված գրողական տեխնիկան (միջտեքստայնություն, մտքի հոսք, բազմաձայնություն և այլն):	Մեկնաբանի տեքստերի արտահայտած գաղափարական հարցադրումները, ասելիքը:

	Ձև	Հասկանա և բացատրի կերպավորման սկզբունքները՝ ելնելով գրական ուղղություն ներից:	Հասկանա և բացատրի գրական երկի նպատակը:	Հասկանա և բացատրի գրական երկի նպատակը, ասելիքը:
		Հասկանա գրական երկի կառուցվածքը, կառուցվածքային տարրերը, բացատրի դրանց փոխկապակցվածությունը, գրական կերպարի զարգացման քայլաշարը:	Ճանաչի և մեկնաբանի կառուցվածքային տարրերը, դրանց փոխկապակցվածությունը, գրական կերպարի զարգացման քայլաշարը:	Ճանաչի և մեկնաբանի կառուցվածքային տարրերը, դրանց փոխկապակցվածությունը, գրական կերպարի հոգեբանական զարգացման քայլաշարը:
		Տարբերակի տեքստը և համատեքստը, մեկնաբանի տեքստի գաղափարը համատեքստում և դրանից դուրս:	Բացատրի գրական երկի կառուցվածքային տարրերի փոխկապակցվածությունը և արտատեքստային հղումները:	Բացատրի գրական երկի կառուցվածքային տարրերի փոխկապակցվածությունը, ներտեքստային և արտատեքստային հղումները:
		Մեկնաբանի տեքստերը՝ ելնելով ժանրային առանձնա հատկություններից:	Մեկնաբանի գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, կոնֆլիկտի զարգացումը և լուծման համոզիչ կամ անհամոզիչ լինելը:	Մեկնաբանի գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, կոնֆլիկտի զարգացումը և լուծման համոզիչ կամ անհամոզիչ լինելը:
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ	Տեքստի հետազոտում	Հասկանա և մեկնաբանի գրողի ընտրած ոճական միջոցների բազմազանությունը:	Հասկանա և մեկնաբանի գրող- ընթերցող կապը գրական ստեղծագործության միջոցով:	Հասկանա և մեկնաբանի գրող- ընթերցող կապը գրական ստեղծագործության միջոցով:
		Բացատրի տեքստում պատկերված ժամանակաշրջանի, միջավայրի արտահայտման միջոցները:	Համեմատի , համադրի և հակա դրի տարբեր հեղինակների գրե լածերը, կերպարների կերտ ման հեղինակային առանձնա հատկությունները:	Բացատրի պատումի ժամանակը:
		Բացատրի տարբեր ժանրերին բնորոշ լեզվաոճական առանձնա հատկությունները:	Բացատրի ժանրին առանձնա հատուկ տարրերի ներթափանցումը մեկ այլ ժանրի մեջ, ոճա կան տարբեր հնարների կիրառման նպատակը:	Համեմատի , համադրի և հակա դրի տարբեր հեղինակների գրելաոճերը, լեզվական հոմա նիշների կիրառությունները, կերպարների կերտման առանձնահատկությունները, ժանրին առանձնահատուկ տարրերի ներթափանցումը մեկ այլ ժանրի մեջ, ոճական տարբեր հնարների կիրառման նպատակը:
		Ինքնուրույնաբար կատարի գրականագիտական դատողություններ՝ հիմնվելով փաստերի վրա:	Ինքնուրույնաբար կատարի գրականագիտական դատողություններ՝ հիմնվելով փաստերի վրա:	Ճիշտ և տեղին օգտագործի գրականագիտական տերմինները:
	Տեքստի ստեղծում	Գրի կարճ պատում՝ ստեղծելով միջտեքստային կապեր (վերնա գիր, բնաբան, ակնհայտ կամ ոչ ակնհայտ կերպով արված հղումներ և այլն):	Գրի կարճ պատում՝ մտածված կերպով խախտելով կոնֆլիկտի և դիպա շարի զարգացումն ապահո վող հաջորդական աստի ճանների հերթականությունը:	Գրի կարճ պատում պատմության ժամանակի (տեքստից դուրս գտնվող իրադարձությունների ժամանակային հերթակա նության) և պատումի ժամանա կի (տեքստում պատկերված իրադարձությունների ժամա նակային հերթականության) անհամապատասխանությամբ :

		Լսածը և կարդացածը վերաշարա դրի ստեղծագործաբար:	2. Լսածը և կարդացածը վերաշարա դրի ստեղծագործաբար:	Վերաշարադրի մտապատկերում և երևակայության մեջ ծնված պատկերները:
		Ստեղծի փոթաբառ սիրելի գրքի կամ ստեղծագործության վերաբերյալ (անհատական կամ խմբային աշխատանք):	Ըստ ստեղծագործության գրի բեմագիր (անհատական կամ խմբային աշխատանք):	3.Ըստ ստեղծագործության գրի ներկայացման, կինոնկարի բեմագիր:
		Ստեղծի գովազ սիրելի գրքի կամ ստեղծագործության վերաբերյալ (անհատական կամ խմբային աշխատանք):	Կատարի թարգմանություն (անհատական կամ խմբային աշխատանք):	Կատարի թարգմանություն ներ և փոխադրություններ:
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ	Վերաբերմունք վարքագիծ	Հաղորդակցվի և համագործակցի վստահորեն և ստեղծագործաբար:	Հաղորդակցվի և համագործակցի՝ ձևավորելով թիմային մտածողություն:	Հաղորդակցվի և համագործակցի՝ ձևավորելով թիմային մտածողություն, դրսևորի առաջնորդի (լիդերի) հատկություններ:
		Լսի դիմացինին:	Դրսևորի առաջնորդին (լիդերին) բնորոշ հատկություններ:	Դրսևորի քննական և դատողական մտածողություն:
		Ցուցաբերի քննական և դատողական մտածողություն:	Ցուցաբերի քննական և դատողական մտածողություն:	Ցուցաբերի քննական և դատողական մտածողություն:
		Հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը:	Համբերությամբ լսի դիմացինին, հայտնի սեփական տեսակետը՝ հիմնավորելով և մեկնաբանելով այն:	Համբերությամբ լսի դիմացինին, հայտնի սեփական տեսակետը՝ հիմնավորելով և մեկնաբանելով այն:
	Արժևորում	Հասկանա և գնահատի հայ և համաշխարհային գրականության իմացությունը որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր պայման:	Հայ և համաշխարհային գրականության միջոցով հասկանա և արժևորի սեփական և այլ ազգերի մշակույթը:	Հայ և համաշխարհային գրականության օրինակով ճանաչի և վերաբրժևորի բարին, գեղեցիկը, վեհը:
		6. Հասկանա և արժևորի հայ գրականության դերը այլ ազգերի գրականությունների շարքում:	Հասկանա և գնահատի գրականության դերը արվեստի այլ բնագավառների համատեքստում:	Հասկանա և գնահատի գրականության միջոցով պատկերավոր խոսք ձևավորելու հնարավորությունն ու դրա կիրառությունն այլ ոլորտներում:
		Ճանաչի և արժևորի ժամանակակից իր կողքին ապրող գրողներին:	Ճանաչի և արժևորի ժամանակակից իր կողքին ապրող գրողներին:	Ճանաչի և արժևորի ժամանակակից իր կողքին ապրող գրողներին:
		Ձեռք բերի հետաքրքրասիրություն գրքի հանդեպ և ընթերցասիրություն ողջ կյանքի ընթացքում:	Ձեռք բերի հետաքրքրասիրություն գրքի հանդեպ և ընթերցասիրություն ողջ կյանքի ընթացքում:	4.Ձեռք բերի հետաքրքրասիրություն գրքի հանդեպ և ընթերցասիրություն ողջ կյանքի ընթացքում:

Գրականություն 7-րդ դասարան
Շաբաթական 3 ժամ, ընդհանուրը՝ 102 ժամ

Թեմա 1	
Բանաստեղծություն	
Նպատակեր	
<p>Տեքստի ընթերցում: Տեքստի ընկալում: Տեքստի ուսումնասիրում: Նոր տեքստի ստեղծում:</p>	
Վերջնարդյունքներ	
<p>Հասկանալ և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը, մեկնաբանի այն: Ուսումնասիրի և մեկնաբանի գրողի կողմից օգտագործված բառապաշարը: Գտնի և մեկնաբանի գրողի կողմից օգտագործված գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները, սովորածը կիրառի խոսքում: Համեմատի՝ գուգադրի և հակադրի տեքստերը: Բացատրի ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: Բացատրի ինչ կերպ է արտահայտվում տեքստում հույզը, զգացմունքը: Արտահայտիչ կարդա տեքստը՝ փոխանցելով զգացողություն, գաղափար, խոսքի գեղագիտություն: Ընդհանրական պատկերացում կազմի տաղաչափության և բանաստեղծական ռիթմի մասին: Հաղորդակցվի և համագործակցի վստահորեն, լսի դիմացինին, կարողանա ձիշտ ձևակերպել հարցը: Հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը:</p>	
Բովանդակություն	
<p>Ե. Չարենց - «Ես իմ անուշ Հայաստանի», «Հեռացումի խոսքեր», ևս մեկ կամ երկու բանաստեղծություն ուսուցչի և աշակերտի ընտրությամբ¹: Ն. Չարյան - «Հայրենի տուն»: Հ. Շիրազ - «Թագադրում», «Գարնանամուտ»: Հ. Սահյան - «Անտառում», ևս մեկ կամ երկու բանաստեղծություն ուսուցչի և աշակերտի ընտրությամբ: Պ. Սևակ - «Քիչ ենք, բայց հայ ենք»: Սիլվա Կապուտիկյան - «Քելե, լառ», մեկ-երկու բանաստեղծություն աշակերտի և ուսուցչի ընտրությամբ: Հովհաննես Գրիգորյան - «Հայաստան», մեկ-երկու բանաստեղծություն աշակերտի և ուսուցչի ընտրությամբ:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<p>Տեքստում գտնել, ընդգծել կամ դուրս գրել պատկերավորման միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: Համեմատել և բացատրել գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության կառուցվածքը, ձևը: Տեքստում գտնել գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը կամ բանալի միտքը, բացատրել: Ցույց տալ և բացատրել բանաստեղծական տեքստի կառուցվածքի, ձևի, հանգավորման և բովանդակության կապը: Կատարել ներտեքստային և արտատեքստային ընթերցում-ուսումնասիրում: Համեմատել բանաստեղծական տարբեր տեքստեր: Կարդացած ստեղծագործությունների համար ընտրել միանման հույզ, ապրում առաջացնող խորհրդանիշեր (երաժշտություն, գույն և այլն): Մեկ նախադասությամբ բնութագրել կարդացած տեքստը: Մտապատկերումներ անել, կատարել կոահումներ (բանավոր և գրավոր): Բանաստեղծական տեքստը վերածել արձակի՝ նոր ձևով կիրառելով հեղինակի գործածած պատկերավորման միջոցները: Գրել կարծիք բանաստեղծության մասին: Բանաստեղծությունը գովազդել թռուցիկներով, բացիկներով, ձայնագրել փոթբասթ:</p>	<p>Օրինաչափություն – բանաստեղծական ռիթմը: Կառուցվածք և գործառույթ – տաղաչափությունը: Անհատական և մշակութային արժեհամակարգ – գրողի կողմից օգտագործված բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության գաղափարը: Ժամանակ և տարածություն – տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: Անհատներ և հարաբերություններ – տեքստում արտահայտված հույզը, զգացմունքը: Կայունություն և փոփոխություն – անցյալի և ժամանակակից գրողների տեքստերի համեմատությունը:</p>

¹ Կամ ընտրական ստեղծագործությունների համար տրվելու է առանձին, ծավալուն ցանկ:

Միջառարկայական կապեր
<p>Պատմություն. Պատմական ակնարկ տեղագործությանն առնչվող պատմական ժամանակաշրջանների մասին: Հայոց լեզու. Բառապաշար, խոսքի կաղապար և մտածողություն: Հասարակագիտություն. Հույզեր, հոգեկան վիճակներ, որոնք դառնում են գրականության նյութ: Արվեստ. Ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարազարդումներ, մեղեդիներ և այլն:</p>
Կապը Հանրակրթության չափորոշի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
<p>Հ1, Հ2, Հ11, Հ23, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46, Հ52, Մ1, Մ7, Մ15, Մ17, Մ23, Մ24, Մ29, Մ30, Մ32, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ41, Մ42</p>

Թեմա 2	
Պատմվածք	
Նպատակներ	
<p>Տեքստի ընթերցում: Տեքստի ընկալում: Տեքստի ուսումնասիրում: Նոր տեքստի ստեղծում:</p>	
Վերջնարդյունքներ	
<p>Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը, մեկնաբանի այն: Գտնի և մեկնաբանի գրողի կողմից օգտագործված գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները: Կատարի ներտեքստային և արտատեքստային ընթերցում-ուսումնասիրում: Գտնի համատեքստային բառեր ու աշխատի դրանցով, համեմատի՝ զուգադրի և հակադրի տեքստերը, տեքստերից սովորած պատկերավորման միջոցները կիրառի խոսքում: Բացատրի՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: Հասկանա և մեկնաբանի գրական-գեղարվեստական կերպարի դերը գրվածքում: Տարբերի գրական սեռերը և ժանրերը: Իմանա, պատկերացում կազմի գրական կոնֆլիկտի (բախման) մասին: Կյանքից և գրականությունից առանձնացնի կոնֆլիկտի տարբեր ձևեր: Ճանաչի դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները: Հաղորդակցվի և համագործակցի վստահորեն, լսի դիմացիին, կարողանա ճիշտ ձևակերպել հարցը, հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը:</p>	
Բովանդակություն	
<p>Դերենիկ Դեմիրճյան, «Ավելորդը» պատմվածքը: Ակսել Բակունց, «Սպիտակ ձի» պատմվածքը: Հրանտ Մաթևոսյան, «Կանաչ դաշտը» պատմվածքը, «Մեր վագրը» ժողովածուից ընտրվի պատմվածքներ: Ուիլյամ Մարտյան, «Նարինջները», «Հինգ հասած տանձ», «Ծիծաղ» պատմվածքները: Գրիգ. «Հիսուսի կատուն» պատմվածքը: Լյուդվիգ Թոմա, «Քեռի Ֆրանցը» պատմվածքը:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<p>Գտնել դիպաշարի հաջորդական ընթացքը ցույց տվող տարրերը՝ նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, գագաթնակետ, գործողության անկում, լուծում: Գտնել ապացույցներ երկի ժանրային պատկանելությունը որոշելու համար: Մեկնաբանել հերոսների արարքների տրամաբանությունը և հաջորդականությունը: Կարդալ, դուրս գրել յուրաքանչյուր հերոսին բնութագրող հատվածները: Կազմել պատմվածքի դիպաշարի քարտեզը: Համեմատել և մեկնաբանել դեպքերի կատարման վայրերը, դրանց նկարագրությունները: Բացատրել տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը, բովանդակությունը: Համեմատել և մեկնաբանել գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման</p>	<p>Պատճառ և հետևանք – դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները: Կառուցվածք և գործառույթ – գրական սեռերը և ժանրերը: Անհատական և մշակութային արժեհամակարգ – գրողի կողմից օգտագործված բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության գաղափարը: Ժամանակ և տարածություն – տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: Անհատներ և հարաբերություններ – գրական-գեղարվեստական կերպարը, տեքստում արտահայտված կոնֆլիկտը: Կայունություն և փոփոխություն – անցյալի և ժամանակակից գրողների տեքստերի համեմատությունը:</p>

<p>միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության կառուցվածքը, ձևը: Կարդացած ստեղծագործություններից ընտրել հերոսներ /կերպարներ և հորինել վերջիններիս բնավորությունն արտահայտող խորհրդանիշեր (կենդանի, իր, գույն և այլն): Գրել ստեղծագործական փոխադրություն: Գրել կարճ պատում՝ կիրառելով կոնֆլիկտի և ամբողջ դիպաշարի զարգացումն ապահովող հաջորդական աստիճանները (նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, գագաթնակետ, գործողության անկում, լուծում): Բանավոր և գրավոր հաղորդել, վերարտադրել դեպքերի ընթացքը որպես ականատես, մասնակից կամ կերպարներից մեկի անունից: Ըստ պատմվածքի գրել բեմագիր (սցենար). ընկերների հետ նախապատրաստել և բեմադրել պատմվածքը:</p>	
Միջառարկայական կապեր	
<p>Պատմություն. Պատմական ակնարկ ստեղծագործությանն առնչվող պատմական ժամանակաշրջանների մասին: Հայոց լեզու. Բառապաշար, խոսքի կաղապար և մտածողություն: Հասարակագիտություն. «Կոնֆլիկտ» հասկացությունը կյանքում և գրականության մեջ: Արվեստ. Ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարազարդումներ, մեղեդիներ և այլն:</p>	
Կապը Հանրակրթության չափորոշի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
<p>Հ1, Հ2, Հ11, Հ23, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ41, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46, Հ52, Մ1, Մ7, Մ15, Մ17, Մ23, Մ24, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ41, Մ42</p>	

Թեմա 3
Վեպ
Նպատակներ
<p>Տեքստի ընթերցում: Տեքստի ընկալում: Տեքստի ուսումնասիրում: Նոր տեքստի ստեղծում:</p>
Վերջնարդյունքներ
<p>Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը, մեկնաբանի այն: Գտնի և մեկնաբանի գրողի կողմից օգտագործված գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները: Գտնի համատեքստային բառեր ու աշխատի դրանցով, համեմատի՝ գուգադրի և հակադրի տեքստերը, տեքստերից սովորած պատկերավորման միջոցները կիրառի խոսքում: Բացատրի ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: Հասկանա և մեկնաբանի գրական-գեղարվեստական կերպարի դերը գրվածքում: Տարբերի գրական սեռերը և ժանրերը: Իմանա, պատկերացում կազմի գրական կոնֆլիկտի (բախման) մասին, կյանքից և գրականությունից առանձնացնի կոնֆլիկտի տարբեր ձևեր: Գտնի և մեկնաբանի ստեղծագործության կոնֆլիկտն ապահովող հակադիր բևեռի կամ բևեռների բախումը: Ճանաչի դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները: Հաղորդակցվի և համագործակցի վստահորեն, լսի դիմացինին, կարողանա ճիշտ ձևակերպել հարցը, հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը, կատարի տեղին և նպատակային հարցադրումներ, ճիշտ եզրահանգումներ, կանխագուշակի հիմնվելով առկա փաստերի վրա:</p>
Բովանդակություն
<p>Ստեփան Զորյան, «Ինքնակենսագրական նոթեր» Վահան Թոթովենց, «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վեպից հատվածներ: Գուրգեն Մահարի, «Պատանեկություն» վեպից հատվածներ: Հ. Զուդերման, «Հոգսը» վեպից հատվածներ: Ուիլյամ Մարոյան, «Մարդկային կատակերգություն» վեպից հատվածներ: Ռ. Պալասիո, «Հրաշքը» հատվածներ:</p>

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<p>Տեքստը բաժանել տրամաբանական հատվածների, դրանց համար հարցեր մշակել։</p> <p>Պատասխանել դասընկերների կազմած հարցերին՝ փորձելով բացատրել տեքստի գլխավոր գաղափարը։</p> <p>Ուսումնասիրել տեքստը, գտնել և ցույց տալ դիպաշարի բաղադրատարրերը։</p> <p>Կազմել դեպքերի հաջորդական ընթացքը ցույց տվող աղյուսակ. դեպքերը սեփական բառերով վերաշարադրել ըստ այդ աղյուսակի։</p> <p>Մեկնաբանել դեպքերի կատարման ժամանակաշրջանը, պատմական վայրը։ Գտնել լրացուցիչ նյութեր տվյալ ժամանակաշրջանի և աշխարհագրական վայրի մասին, ներկայացնել լսարանին։</p> <p>Ուսումնասիրել տվյալ հեղինակի կենսագրությունը, ցույց տալ ինքնակենսագրական վեպի և կենսագրական փաստերի միջև գոյություն ունեցող համընկնումները։</p> <p>Տեքստում գտնել նկարագրական հատվածները, ցույց տալ դրանց դերը պատումի մեջ։</p> <p>Ուսումնասիրել երկի բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները, ցույց տալ դրանց կապը բովանդակության հետ։</p> <p>Կատարել ներտեքստային և արտատեքստային ընթերցում-ուսումնասիրում։</p> <p>Համեմատել տեքստերը, ցույց տալ դրանց նմանությունները և տարբերությունները։</p> <p>Տեքստում գտնել և դուրս գրել կերպարներին բնութագրող տողեր, արտահայտություններ. բնութագրել սեփական բառերով՝ փորձելով հասկանալ և պատճառաբանել նրանց արարքների տրամաբանությունը։</p> <p>Կարդացած ստեղծագործություններից ընտրել հերոսներ/կերպարներ և հորինել վերջիններիս բնավորությունն արտահայտող խորհրդանիշեր (կենդանի, իր, գույն և այլն)։</p> <p>Գրել ստեղծագործական փոխադրություն. դեպքերը պատմել որպես ականատես կամ մասնակից։</p> <p>Բնութագրել հեղինակին՝ ըստ ինքնակենսագրական պատումի։</p> <p>Գեղարվեստական ոճով սեփական կյանքից ընտրված դեպքեր պատմել։</p> <p>Գրողի կյանքի պատմությունը վերարտադրել սեփական բառերով, նոր ձևով. կազմել գրողի դիմանկարը ըստ վեպի և կենսագրական փաստերի։</p>	<p>Պատճառ և հետևանք – դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները։</p> <p>Կառուցվածք և գործառույթ – գրական սեռերը և ժանրերը։</p> <p>Անհատական և մշակութային արժեհամակարգ – գրողի կողմից օգտագործված բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները, ստեղծագործության գաղափարը։</p> <p>Ժամանակ և տարածություն – տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը։</p> <p>Անհատներ և հարաբերություններ – գրական-գեղարվեստական կերպարը, տեքստում արտահայտված կոնֆլիկտը։</p> <p>Կայունություն և փոփոխություն – անցյալի և ժամանակակից գրողների տեքստերի համեմատությունը։</p>
Միջառարկայական կապեր	
<p>Պատմություն. Պատմական ակնարկ տեղագործությանն առնչվող պատմական ժամանակաշրջանների մասին։</p> <p>Հայոց լեզու. Բառապաշար, խոսքի կաղապար և մտածողություն։</p> <p>Հասարակագիտություն. «Կոնֆլիկտ» հասկացությունը կյանքում և գրականության մեջ։</p> <p>Արվեստ. Ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարագրություններ, մեղեդիներ և այլն։</p>	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
<p>Հ1, Հ2, Հ11, Հ23, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ41, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46, Հ52, Մ1, Մ7, Մ15, Մ17, Մ23, Մ24, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ41, Մ42</p>	

Գրականություն 8-րդ դասարան
Շաբաթական 3 ժամ, ընդհանուրը՝ 102 ժամ

Թեմա 1
Բանաստեղծություն, բալլադ, պոեմ
Նպատակներ
<p>Տեքստի ընթերցում։</p> <p>Տեքստի ընկալում։</p> <p>Տեքստի ուսումնասիրում։</p> <p>Նոր տեքստի ստեղծում։</p>
Վերջնարդյունքներ

Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը/գաղափարները:
Տարբերակի տեքստում արտահայտված գաղափարների արդիականությունը և ժամանակագրությունը:
Ուսումնասիրի և մեկնաբանի գրողի կողմից օգտագործված բառապաշարը:
Հասկանա և վեր հանի խոսքի արտահայտչամիջոցների կիրառությունը միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով:
Համեմատի՝ զուգադրի և հակադրի տեքստերը:
Հասկանա և մեկնաբանի հեղինակի և պատմողի (նարատորի) տարբերությունը:
Ուսումնասիրի և մեկնաբանի ստեղծագործությունը պատմող (նարատոր) - տեքստ դիրքից:
Ուսումնասիրի և մեկնաբանի ստեղծագործությունը հեղինակ - տեքստ դիրքից:
Բացատրի՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում հույզը, զգացմունքը:
Արտահայտիչ կարդա տեքստը՝ փոխանցելով զգացողություն, գաղափար, խոսքի գեղագիտություն:
Ընդհանրական պատկերացում **կազմի** տաղաչափության և բանաստեղծական ռիթմի մասին:
Հաղորդակցվի և համագործակցի՝ ձևավորելով թիմային մտածողություն, լսի դիմացիին, **հայտնի** սեփական տեսակետը՝ **հիմնավորելով և մեկնաբանելով** այն:
Ձեռք բերի և կիրառի գրականագիտական գիտելիքներ:

Բովանդակություն

Պետրոս Դուրյան, «Լճակ» բանաստեղծությունը:
 Հովհաննես Թումանյան, «Թմկաբերդի առումը» պոեմը, «Փարվանա» բալլադը, «Հայոց լեռներում» բանաստեղծությունը:
 Ավետիք Իսահակյան, «Ռավեննայում», «Կտակ», ևս մեկ-երկու բանաստեղծություն ուսուցչի և աշակերտի ընտրությամբ:
 Դանիել Վարուժան, «Ձոն», «Ցորյանի ծովեր» բանաստեղծությունները:
 Մ. Մեծարենց, «Աքաքիաներու շուքին տակ», «Սիրերգ» բանաստեղծությունները:
 Վ. Տերյան, «Տխրություն», «Իմ խաղաղ երեկոն է հիմա», «Հրաժեշտի գազել», բանաստեղծությունները:
 Ռազմիկ Դավոյան, «Երեկ տխուր, այսօր ուրախ» բանաստեղծությունը:
 Խաչիկ Մանուկյան, «Բարձունքը մերն է, տղերքը չկան» բանաստեղծությունը:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
---------------------------------------	--

Արտահայտիչ կարդալ, ուսումնասիրել բանաստեղծական տեքստի կառուցվածքը՝ ձևը, հանգավորումը, վանկերի քանակը յուրաքանչյուր տողում:
 Բանաստեղծական յուրաքանչյուր հատվածի համար **ընտրել** բանալի բառը, բառակապակցությունը, **բացատրել** ընտրությունը:
Ցույց տալ և բացատրել ձևի և բովանդակության կապը:
Համեմատել և բացատրել օգտագործված բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման միջոցները և արտահայտչամիջոցները:
Կազմել կարդացած բանաստեղծություններից դուրս գրած մակդիրների բառարան:
Գտնել բանաստեղծության մեջ կիրառված խորհրդանիշները, **բացատրել** դրանց դերը տվյալ տեքստում:
 Կարդացած ստեղծագործություններից **ընտրել** պատմողներ (նարատորներ) և **ստեղծել** վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:
 Մեկ նախադասությամբ **բնութագրել** կարդացած տեքստը:
Համեմատել կարդացած բանաստեղծական տեքստերը, ցույց տալ նմանությունները և տարբերությունները:
 Բանաստեղծական տեքստը **վերածել** արձակի՝ գործածելով հեղինակից սովորած պատկերավորման միջոցները:
